ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐԻ/ՄԵԿՆԱԲԱՆՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

ՆԱԽԱԲԱՆ

«Մրցակցող պատումներ» ծրագրի շրջանակներում Երեւանի մամուլի ակումբը Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի պատվերով իրականացրել է հայաստանյան լրատվամիջոցներում խմբագրական/մեկնաբանող հոդվածներ (Open editorials/commentary articles) ժանրի, որպես վերլուծական, կրթական նշանակություն ունեցող նյութերի կիրառման վերաբերյալ հետազոտություն:

Թեմայի ուսումնասիրությունը կատարվել է երկու բաղադրիչների հիման վրա մշակված մեթոդաբանությամբ՝ ընտրված հինգ («Առավոտ», «Հրապարակ», «Ժողովուրդ», «ՍիվիլՆեթ», «Ալիք Մեդիա») լրատվամիջոցների տեքստային հրապարակումների մեկամսյա (2024 թ. փետրվար) մշտադիտարկման, ինչպես նաեւ երեք գլխավոր խմբագիրների (Արամ Աբրահամյանի՝ «Առավոտ», Քնար Մանուկյանի՝ «Ժողովուրդ», Արա Թադեւոսյանի՝ «Մեդիամաքս») հետ խորացված հարցազրույցների:

Հետազոտության համար լրատվամիջոցների եւ խմբագիրների ընտրությունը կատարվել էր փորձագիտական խորհրդատվությունների եւ պիլոտային դիտարկումների միջոցով, հաշվի առնելով, առաջին հերթին, համապատասխան ժանրերի օգտագործման հաճախակիությունը: Եվ ինչպես ակնհայտորեն երեւում է ուսումնասիրման օբյեկտների ընտրությունից, խմբագրականների/կարծիքների սյունակները առավել տարածված են քաղաքական իշխանությունների նկատմամբ ընդդիմադիր, քննադատական վերաբերմունք ունեցող եւ չեզոք դիրքորոշում ունեցող լրատվամիջոցներում:

Թեեւ ուսումնասիրությունները կենտրոնացած էին ժանրային առանձնահատկությունների վրա, պատշաճ ուշադրության արժանացավ նաեւ համապատասխան հրապարակումներում տարածաշրջանային զարգացումների եւ Հայաստանի ներքին քաղաքականության լուսաբանումը: Հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել են լրատվամիջոցներին ուղղված առաջարկություններ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Մերօրյա հայաստանյան մամուլում խմբագրական/մեկնաբանող հոդվածներ (Open editorials/commentary articles) ժանրը բավականին հազվադեպ հանդիպողներից է: Այդ պատճառով ուսումնասիրվել է նաեւ «հարակից» ժանրերի լայն սպեկտրի կիրառումը՝ դասական իմաստով խմբագրականներ, խմբագրի սյունակներ, ինչպես «ներքին», այդպես էլ «արտաքին» հեղինակների կարծիքների սյունակներ:

Ավանդական իմաստով «op-ed» անվանումը կրող ժանրի սահմանափակ տարածումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Հիմնականը՝ լրատվամիջոցների ֆինանսական խնդիրներն են, որոնք հնարավորություն չեն ընձեռում պահանջված եւ որակյալ «արտաքին» հեղինակներին պատշաճ հոնորարներ վճարել: Թեեւ կան օրինակներ, երբ այդ հեղինակներն ունեն համագործակցության համար այլ

շարժառիթներ, քան ֆինանսական շահագրգռվածությունն է, սակայն դա չի կարող կայուն գործոն լինել ժանրի զարգացման համար: Մյուս էական պատճառը լրատվամիջոցների լսարանի մոտ տեքստային նյութի նկատմամբ պահանջարկի անկումն է, պոտենցիալ հեղինակների համար ինքնարտահայտման հնարավորությունների բազմազանությունն է՝ գրառումներ սոցիալական ցանցերում, ինքնուրույն բլոգներ, այդ թվում «վլոգներ», եւ վերջապես՝ հեռուստատեսային հարցազրույցների, փոդքաստների եւ այլ տեսաարտադրանքի գերիշխումը տարածաշրջանային եւ ներքին քաղաքական խնդիրների վերաբերյալ կարծիքներ ձեւավորողների անդրադարձի տեսակետից:

Չի կարելի անտեսել նաեւ այն հանգամանքը, որ հաճախակի պարբերականությամբ զգայական հարցերի վերաբերյալ «գրավոր» կարծիք արտահայտելը, մանավանդ արագ փոփոխվող հասարակական-քաղաքական համատեքստում եւ դիրքորոշումների բեւեռացման մթնոլորտում, հանրային դեմքերի դեպքում ռիսկեր է առաջացնում, որ հակակրանք տածող ընթերցողը կմանիպուլացնի բովանդակությունը, անբարեխիղճ «համեմատություն» կանցկացնի նախկինում արտահայտված եւ ներկա հայացքների միջեւ: Վարկաբեկման նման վտանգը նույնպես կարող է պոտենցիալ հեղինակներին հետ պահել մշտական այունակ վարելու պատրաստակամությունից:

Հինգ լրատվամիջոցների մշտադիտարկումն իրականացվել է ըստ թեմատիկ (ներքին քաղաքականություն, արտաքին/միջազգային քաղաքականություն, Արցախ/հայ-ադրբեջանական հակամարտություն, ՀՀ Սահմանադրության հրացեր, սոցիալ-տնտեսական խնդիրներ, մշակույթ/սպորտ), հրապարակումների տրամադրվածության (դրական կամ բացասական ուղերձ), ինչպես նաեւ ըստ հեղինակների եւ նյութերի ժանրային առանձնահատկությունների:

2024 թ. փետրվարին մշտադիտարկման առարկա դարձած լրատվամիջոցներում արձանագրվել է ուսումնասիրվող ժանրերի 77 հրապարակում: Բովանդակային առումով այդ հրապարակումների գրեթե կեսը (37), որպես հիմնական թեմա, նվիրված են եղել ներքին քաղաքականությանը, հաճախականությամբ երկրորդը արտաքին քաղաքականությունն է՝ 19, իսկ երրորդը՝ Արցախ/հայ-ադրբեջանական հակամարտությունը՝ 9: Այս թվերը հաստատում են նախնական դիտարկումները, որ հայաստանյան լրատվամիջոցները առավել ակտիվորեն լուսաբանում են քաղաքական ճամբարների միջեւ պայքարը, թեեւ, ըստ սոցիոլոգիական հարցումների, հասարակությանն ավելի շատ մտահոգում են սոցիալական եւ անվտանգային հարցերը: Եվ եթե արտաքին/միջազգային քաղաքականության, Արցախի/ հակամարտության թեմաները, որոնք անմիջապես առնչվում են անվտանգության խնդիրներին, արժանացել են որոշակի ուշադրության (հանրագումարում՝ 28 անդրադարձ), ապա սոցիալ-տնտեսական, ինչպես եւ թեժ կրքեր առաջացրած՝ նոր Սահմանադրության հնարավոր ընդունման հարցերը հիմնական թեմա էին դարձել միայն չորսական անգամ: Այստեղ պետք է ընդգծել, որ դիտարկված հրապարակումներում Սահմանադրության թեմայի լուսաբանումը ոչ այնքան իրավական շեշտադրում ուներ, որքան հայ-ադրբեջանական հակամարտության հետ էր կապված եւ նույնպես կարող էր ընկալվել անվտանգության համատեքստում:

Որպես մշտադիտարկման հատկանշական արդյունք պետք է առանձնացնել այն, որ ուսումնասիրվող ժանրերի 77 հրապարակումներից ընդամենը չորսն էին դրական ուղերձ պարունակում, ընդ որում, դրանցից երեքը մշակույթի/սպորտի թեմայով էին: Մյուս 73 հրապարակումների համար բնորոշ են քննադատության, դժգոհության ու տագնապի արտահայտված երանգները: Այս տվյալները բացատրվում են ոչ այնքան ուսումնասիրության համար ընտրված լրատվամիջոցների քաղաքական ուղղվածությամբ, որքան հանրության մեջ առկա տրամադրություններով, որոնք իրենց հերթին պայմանավորված են 2020 թ. 44-օրյա պատերազմի արդյունքներով, Արցախի հայաթափման եւ հետպատերազմական ներքին քաղաքական, անվտանգային ճգնաժամով:

Ներքին քաղաքականությանը նվիրված հրապարակումների գերակշիռ մեծամասնությունը ձեւավորվել է հիմնականում **«Առավոտի»** (16) եւ **«Հրապարակի»** (14) հաշվին: Ուսումնասիրված բոլոր հինգ լրատվամիջոցներից այդ երկուսում հրապարակվել են ներքին քաղաքական թեմայով խմբագրականների/յունակների մոտ 80 տոկոսը:

«Ժողովուրդը» ուսումնասիրված լրատվամիջոցներից միակն է, որտեղ սոցիալ-տնտեսական թեման նույն ուշադրությանն է արժանացել, ինչ ներքին քաղաքականը (երեքական հրապարակում):

«Ալիք Մեդիայում» մի քանի այլ թեմաներ՝ արտաքին/միջազգային քաղաքականությունը, Արցախը/հայ-ադրբեջանական հակամարտությունը եւ Սահմանադրության հետ կապված հարցերը գերազանցել են ներքին քաղաքականությանը նվիրված հրապարակումների թվին: **«ՍիվիլՆեթում»** արտաքին/միջազգային քաղաքականության եւ Արցախի/հայ-ադրբեջանական հակամարտության թեմաները քանակական առումով նույնպես գերացանցել են ներքին քաղաքականությանն առնչվող հրապարակումներին, իսկ մշակույթը վերջինի հետ հավասար ուշադրության է արժանացել:

Միեւնույն ժամանակ, հատկանշական է, որ նույնիսկ արտաքին/միջազգային քաղաքականությանը նվիրված հրապարակումների մեծ մասում Հայաստանի հետ այս կամ այն կերպ կապված խնդիրները գերակշռում են: Սա եւս մեկ վկայությունն է այն բանի, որ, անկախ ժանրերից, հայկական լրատվամիջոցները կենտրոնացած են սեփական երկրի վրա եւ բավականին սահմանափակ հետաքրքրություն ունեն աշխարհի այլ կետերում տեղի ունեցող կարեւոր իրադարձությունների նկատմամբ: Մասնավորապես, մշտադիտարկման առարկա հանդիսացող հրապարակումներում համարյա բացակայում է անդրադարձը Գազայի հատվածին, Ուկրաինային, ինչպես նաև ՌԴ-ի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի ընտրություններին եւ մի շարք այլ թեմաների, որոնք միջազգային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում են:

Ինչ վերաբերում է զուտ ժանրային առանձնահատկություններին, ապա **«Ժողովուրդ»** օրաթերթը (Armlur.am կայքը) առավել մոտ է**,** դասական իմաստով, խմբագրական

հոդվածների պրակտիկային: Այստեղ որոշակի պարբերականությամբ (փետրվարի ընթացքում հրապարակվել են յոթ նմանատիպ նյութեր) լսարանին առաջարկվում են անստորագիր, սյունակային տարրեր (կարծիք, վերաբերմունք, էմոցիա) պարունակող հոդվածներ, որոնք կարելի է գտնել սովորաբար խմբագրականներին հատկացվող տեղում:

«Հրապարակը» փետրվարի ընթացքում տեղադրել է 21 խմբագրական սյունակ, բոլորը ստորագրված են գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանի կողմից: Ինչպես եւ «Ժողովուրդում», այստեղ էլ «հարակից» այլ ժանրերի հրապարակումներ չեն արձանագրվել:

«Առավոտում» առանձնանում է Արամ Աբրահամյանի «Խմբագրի սյունակը» (20 հրապարակում փետրվարի ընթացքում): Այս լրատվամիջոցի «Վերլուծություն» բաժնում ընդգրկված նյութերից յոթն ունեն «սյունակային տարրեր», եւ բոլորը ստորագրված են կա՛մ Արամ Աբրահամյանի, կա՛մ Էմմա Գաբրիելյանի (արտաքին/միջազգային քաղաքական թեմաներ) կողմից:

«Ալիք Մեդիան» փետրվարի ընթացքում հրապարակել է հետազոտության առարկա հանդիսացող 13 ստորագրված նյութեր, որոնց հեղինակներն են ինչպես գլխավոր խմբագիր Տիգրան Պասկեւիչյանը, ինչպես նաեւ այլ (այդ թվում «արտաքին») պայմանական սյունակագիրներ: Այս լրատվամիջոցը շարունակում է կարեւորել Op-Eds-ին համարժեք ժանրը, որոշակի պարբերականությամբ հրապարակելով «արտաքին» հեղինակների սյունակներ, որոնք ազատ են խմբագրության ուղղվածությանը հետեւելու պարտավորությունից:

«ՍիվիլՆեթ»-ն ունի «Կարծիք» խորագիրը, որտեղ փետրվարի ընթացքում հրապարակվել են տարբեր հեղինակների (ինչպես «ներքին», այնպես էլ «արտաքին») տարբեր թեմաներով ինը «սյունակային տարրեր» պարունակող ստորագրված նյութեր:

<u>ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ</u>

Երեք ընտրված գլխավորներին առաջարկվել է հետեւյալ հարցաշարը.

I. *Ի՞նչն է ավելի կարևոր. դիտարկվող թեմայի կամ իրադարձության վերաբերյալ հստակ տեսակետ ունենա՞լը, թե՞ խմբագրական հոդված հրապարակելուց առաջ խնդրի էությունը հասկանալը:*

II. *Խնդրում ենք ներկայացնել խմբագրական գրելու կանոնները, որոնք հեղինակը փորձում է պահպանել աշխատանքի ընթացքում (ի՞նչն է թույլատրելի, և ի՞նչն է անթույլատրելի): Ինչպե՞ս եք փորձում հավասարակշռել ձեր սեփական և կորպորատիվ պահանջները (եթե կան այդպիսիք):*

III. *Գրելու ընթացքում արդյոք կարևո՞ր է կոնկրետ լսարան մտքում ունենալը: Խնդրում ենք ներկայացնել խմբագրական գրելու կանոնները, որոնք հեղինակը փորձում է պահպանել աշխատանքի ընթացքում (ի՞նչն է թույլատրելի, և ի՞նչն է անթույլատրելի): Ինչպե՞ս եք փորձում հավասարակշռել ձեր սեփական և կորպորատիվ պահանջները (եթե կան այդպիսիք):*

IV. *Ի՞նչ է տեղի ունենում վերջակետ դնելուց հետո: Գրածը խմբագրելու համար որքա՞ն ժամանակ է ձեզ անհրաժեշտ: Խմբագրականը մուտքագրելուց հետո որոշակի դադար տալի՞ս եք: Ինչու՞ է դադար տալը կարևոր:*

V. *Ինչպե՞ս են լսարանի կողմից ընկալվում խմբագրականները, և որքանո՞վ են դրանք կարևոր այն լրատվամիջոցի համար, որտեղ դուք աշխատում եք: Ունե՞ք «հաջողության» ձեր սեփական ցուցանիշները:*

VI. *Համաշխարհային կամ տարածաշրջանային անկայունությունն իր ազդեցությունն է թողնում հավասարակշիռ լուսաբանման վրա, ցանկացած ժանրի լրագրողական նյութերի վրա: Ինչպե՞ս կարելի է աշխատանքի տեմպն ու որակը պահպանել: Վերջին տարիներին ի՞նչն է փոխվել միջազգային նյութերում կամ վերլուծություններում (մասնագիտական, էթիկական, մարդկային առումով)՝ հաշվի առնելով աշխարհում տեղի ունեցող զարգացումները:*

VII. *Ճի՞շտ է, որ որակյալ խմբագրականներ ստեղծում են փորձառու, ինչ-որ առումով «իմաստնացած» լրագրողները: Այս պնդումը դեռևս կիրառելի՞ է:*

VIII. *Ունե՞ք սյունակագիրներ նաև՝ դրսից: Կարծիք ներկայացնելը որքանո՞վ եք կարևորում: Պարտադի՞ր է, որ այն ձեր խմբագրական կարծիքին համահունչ լինի:*

Մեր ուսումնասիրության նպատակներից էր պարզելը, թե որքանով են մեր հարցմանը մասնակցած ԶԼՄ-ների ղեկավարները կարեւորում հանրային հրատապ խնդիրների վերաբերյալ կարծիքի ներկայացումը՝ լինի դա խմբագրականի կամ այլ լրագրողների, ինչպես նաեւ արտաքին հեղինակների սյունակների միջոցով:

Խմբագրական գրելու կանոնների, հեղինակային կարծիքի եւ լրատվամիջոցի կորպորատիվ պահանջների հավասարակշռության խնդրի, լսարանի ընկալման եւ «հաջողության» ցուցանիշների մասին մեր նախապես կազմած հարցաշարին պատասխանել են հայաստանյան երեք հայտնի լրատվամիջոցների ղեկավարներ՝

- **Արամ Աբրահամյանը**, «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր,
- **Արա Թադեւոսյանը**, «Մեդիամաքս» լրատվական գործակալության համահիմնադիր, տնօրեն,
- **Քնար Մանուկյանը**, «Ժողովուրդ» օրաթերթի գլխավոր խմբագիր:

Դասական իմաստով «խմբագրական»՝ հարցմանը մասնակցած ԶԼՄ-ներից միայն «Առավոտն» ունի՝ 30-ամյա ավանդույթ, թեպետ այս դեպքում խոսքը ավելի շատ կարող է գնալ խմբագրի սյունակի մասին: Թերթը մշտապես կարեւորել է այդ ժանրը եւ իր լսարանին ներկայացրել խմբագրի կարծիք: Թերթի հիմնադրման առաջին տարիներին խմբագրականները հեղինակել է փորձառու լրագրողներից մեկը՝ Գենոֆիյա Մարտիրոսյանը, 2001 թվականից առայսօր՝ միայն գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը: Հրապարակումներն արտահայտում են հեղինակի անձնական կարծիքը, ինչը սահմանված է նաեւ «Առավոտի» էթիկայի վարքականոնով.«*Առաջին էջում տպագրված մեկնաբանությունը նրա հեղինակի անձնական կարծիքն է, չի արտահայտում խմբագրության տեսակետը եւ որեւէ ձեւով չի ազդում մնացած նյութերի ուղղվածության վրա*»: Աբրահամյանը համարում է, որ խմբագրի սյունակը «հենց նրա համար է, որ սեփական դիրքորոշում հայտնես», այն դեպքում որ դասական խմբագրականը ենթադրում է խմբագրակազմի կամ խմբագրական կոլեգիայի հավաքական դիրքորոշում:

«Մեդիամաքսի» տնօրեն Արա Թադեւոսյանն իր սյունակը գրելու սկզբունքներում տարանջատում է քաղաքական եւ ոչ քաղաքական թեմատիկան: «*Քաղաքական թեմաներով գրելիս ես միշտ աշխատում եմ մի քիչ ժամանակ տալ, որ թեման նստի, ես աշխատում եմ ավելի զուսպ լինել*»: Բայց եւ հավելում է. «*Երբեմն լինում են «վոպիյուշչի» (արտառոց) բաներ, որոնց վերաբերյալ կարող է հենց նույն օրն էլ գրեմ*»:

«Ժողովուրդ» օրաթերթի պարագայում «խմբագրականը» վերջին երկու տարիներին փոխել է իր՝ «հեղինակային կարծիք» լինելու նախկինում կիրառվող մոտեցումը եւ, ըստ էության, այժմ արտահայտում է խմբագրակազմի կարծիքը: Թերթն իր գոյության 12 տարիների ընթացքում միշտ էլ «կոլեկտիվ» որոշում է կայացրել խմբագրական նյութի վերաբերյալ, սակայն նախկինում դրանք հեղինակել է թերթի հիմնադիր խմբագիրը՝ Թագուհի Թովմասյանը:

Ներկայիս գլխավոր խմբագիր Քնար Մանուկյանն ասում է, որ փոփոխությունը պայմանավորված է Թագուհի Թովմասյանի՝ ՀՀ ԱԺ պատգամավոր դառնալու եւ հատկապես «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից դուրս գալու հանգամանքով.«*Շատ հարվածներ էին գալիս մեզ վրա, անկախ նրանից, ով էր հեղինակում սյունակները, Թագուհուն քարկոծողները պնդում էին, որ դա ինքն է գրում: Ստիպված էինք անցնել անստորագիր խմբագրականների*»:

Դրանք որոշ օտարերկրյա, ինչպես նաեւ խորհրդային տարիների մամուլում ընդունված՝ լրատվամիջոցի «քաղաքական գիծը» ներկայացնող՝ «առաջնորդողների» են նմանվում: Ընդ որում, երբ ասում ենք «կոլեկտիվ կարծիք», դա ոչ թե վերացական բնութագրում է, այլ հենց գործնականում ամրագրված աշխատաձեւ: Մանուկյանն ասում է, որ խմբագրությունը առավոտյան պարտադիր խորհրդակցության է հավաքվում, որի ժամանակ էլ քննարկվում եւ հաստատվում են առաջին էջում հրապարակվող նյութի թեման եւ հեղինակը:

Ք. Մանուկյանը համարում է, որ խմբագրականը գրելիս թեմայի էությունը հասկանալը թիվ մեկ խնդիրն է, ու դրանով է պայմանավորում նաեւ հեղինակների փոփոխությունը.«*Հիմա խմբագրականը կարող է հեղինակել մեր լրագրողներից ինչ-որ մեկը, նայած թե ինչ թեմայով է գրվում, կարող է լինել տարբեր թեմաներով՝ իրավական, քաղաքական, սոցիալական կամ իրադարձային: Պարզապես, այն դրվում է թերթի առաջին էջում եւ անստորագիր է*»:

Մեր այն հարցին, թե լրատվամիջոցն ինչպես է փորձում հավասարակշռել խմբագրական կարծիքը եւ կորպորոտիվ պահանջները, եթե այդպիսիք կան, թե՛ «Առավոտի, թե՛ «Մեդիամաքսի», թե՛ «Ժողովուրդ» օրաթերթի խմբագիրները միանման պատասխան են տվել՝ չկան կորպորատիվ պահանջներ, իրենք նման պահանջներով կաշկանդված չեն: Ի դեպ, «Առավոտի» խմբագիրը նաեւ հավելել է. «*Չկա կորպորատիվ պահանջ, երբեք չի եղել, եւ, մեր մեջ ասած, այդ պատճառով է, որ մարդիկ ցածր ու երբեմն ուշացող աշխատավարձով են աշխատում*»:

Արա Թադեւոսյանն ընդգծել է.«*Սյունակների էությունը հենց այդ է, որ ընթերցողը հասկանում է, որ սա տվյալ մարդու կարծիքն է: Հրավիրյալ հեղինակների դեպքում միշտ դիսքլեյմերը ներքեւում կա, որ սա իր անձնական կարծիքն է եւ կարող է մեր կարծիքին*

չհամապատասխանել: Իմ ու խմբագրի՝ Դավիթ Ալավերդյանի դեպքում անկապ կլինի նման դիսքուսիաներ դնելը, որովհետեւ մենք այստեղ ենք աշխատում: Բայց ինձ թվում է, որ մարդիկ նաեւ մեր երկուսի խմբագրականների դեպքում են հասկանում, որ սա հենց հեղինակի կարծիքն է»:

Արա Թադեւոսյանը նշել է, որ ինքը երբեք չի փորձում իր կարծիքը հարմարեցնել իրենց լսարանի պահանջներին. «*Մեդիամաքսում ինչ որ հրապարակվեց, չի հեռացվում եւ չի խմբագրվում: Սյունակների դեպքում՝ առավել եւս: Եթե, օրինակ, մենք նյութ ենք անում ինչ-որ խնդրահարույց բաների մասին, լրագրության ոսկե կանոններին միշտ հետեւում ենք՝ մի քանի կարծիք ներկայացնել, ինֆորմացիան ստուգել եւ այլն: Բայց հիմա, եթե, ասենք, X մարդն ինչ-որ բան է ասել, որի հետ ես կտրականապես համաձայն չեմ, ես ներկայացնում եմ իմ տեսակետը: Այստեղ երկրորդ կարծիք ներկայացնելու խնդիր չկա*»: Թադեւոսյանը խոսել է նաեւ իր հեղինակային սյունակում երաժշտական թեմաներով ամենամսյա հրապարակումների մասին, նշելով.«*Ինչքա՞ն կարելի է քաղաքականությունից խոսել, մանավանդ, որ քաղաքականություն, որպես այդպիսին, չունենք էլ*»:

«Մեդիամաքսը» մեր հարցմանը մասնակցած միակ լրատվամիջոցն է, որը մոտ տասը սյունակագիր ունի, նաեւ՝ դրսից: Արա Թադեւոսյանը շատ է կարեւորում խմբագրականների ու հեղինակային սյունակների առկայությունն իրենց լրատվամիջոցում եւ դրանք համարում է «Մեդիամաքսի» բնորոշիչներից.«*Այս անդադար լրահոսի պարագայում, որ թափվում է մարդկանց գլխին, սյունակները, կարծիքը, դա այն ժանրն է, որին, իմ կարծիքով, մարդիկ կարոտում են. վերլուծություն, նորմալ մարդու խոսք, նորմալ մարդու կարծիք…*»:

Լսարանին վերաբերող հարցին պատասխանելիս Արամ Աբրահամյանն ընդգծում է, որ ինքն իր հարազատ «նիշան» ունի, գրում է մտածող մարդկանց համար, որոնք ունակ են լսելու իրենց կարծիքից տարբերվող տեսակետ եւ, պայմանականորեն ասած, իր խոսքը «Դոգի» (բլոգեր Վարդան Ղուկասյանի) լսարանին հարմարեցնել չի ցանկանում:

Քնար Մանուկյանն այլ կերպ է մեկնաբանել խմբագրության խոսքը լսարանի ակնկալիքների հետ համադրելու հարցը: Խմբագրի կարծիքով՝ կան թեմաներ, որոնք լուսաբանելիս անհրաժեշտ է զգույշ լինել, աչքի առաջ ունենալ ընթերցողին. «*Օրինակ, ռազմագերիների թեման լուսաբանելիս միշտ պետք է գիտակցել, որ մյուս կողմում ծնողներ են, ընտանիքի անդամներ, չի կարելի նրանց ցավեցնել, որ մեր հրապարակումը կարող է բացասաբար ազդել գերության մեջ գտնվողների վիճակի վրա: Դրա համար մեր ցանկացած լրագրող այդ հանգամանքի հետ հաշվի է նստում*»:

Արամ Աբրահամյանը խմբագրական գրելու հատուկ «տեխնոլոգիա» ունի. նախ գրում է թղթի վրա, ձեռագիր, մուտքագրելիս որոշ խմբագրումներ է անում, դադար է տալիս, կարեւորում է նաեւ, որ լրագրողի մի երկրորդ աչք էլ նայի իր գրածը, հետո նոր՝ ուղարկում է սրբագրման:

Արա Թադեւոսյանն, ընդհանուր առմամբ, դադարների կարիք չի տեսնում. «*Նյութը գնաց, իր կյանքով ապրում է*»:

«Ժողովուրդը» եւս կարեւորում է «դադարը», բայց կոնկրետ ժամաչափ ունի՝ առավոտյան ժամը 10:00-ի ժողովից մինչեւ տվյալ օրվա երեկոյան 21:30-ը, երբ թերթը գնում է տպարան:

Խմբագրական հոդվածների «հաջողության ցուցանիշները» խմբագիրների համար տարբեր են: Արամ Աբրահամյանի համար դա իր անձնական ընկալումն է՝ եթե իր գրածը հաջորդ օրն էլ իրեն դուր է գալիս, ուրեմն հաջողել է:

«Ժողովուրդը» իր լսարանի գնահատանքն է համարում ընթերցողների զանգերը, մեկնաբանությունները:

«Մեդիամաքսի» համար հաջողության ցուցանիշը հարաբերական է.*«Գրելիս ինձ համար կարեւորը թեման է: Կա թեմա, որ հազար հոգու համար է կարեւոր, եւ երբ այդ հազար հոգին կարդում են, ես շատ գոհ եմ:* Արա Թադեւոսյանը մի չափորոշիչ էլ ունի.*«Այո, ինձ համար հաջողության ցուցանիշ է, երբ հայտնի օտարերկրացին մեզ համար սյունակ է գրում, դա մեր խմբագրության հանդեպ վստահության ապացույցն է»:*

Մեր հետազոտության թիրախում են եղել նաեւ համաշխարհային եւ տարածաշրջանային անկայունության համատեքստում խմբագրական նյութերում կամ վերլուծություններում մասնագիտական էթիկայի պահպանման, որակյալ լրագրության խնդիրները:

«Մեդիամաքսն» այս տեսակետից վկայակոչում է մասնագիտական սկզբունքները, որոնք իրենք որդեգրել են դեռեւս 25 տարի առաջ՝ հիմնադրման օրվանից, եւ շեշտում է հեղինակների փորձառության կարեւորությունը.*«Ես կարծում եմ, որ խմբագրականներ, սյունակներ գրել կարող են որոշակի փորձ ունեցող, որոշակի «բագաժ» ունեցող մարդիկ: Կոպիտ ասած՝ դու պիտի այդ իրավունքը ունենաս: Պարզ է, դու լսարանին դասեր չես տալիս, բայց, միեւնույն է, դա պիտի անի ինչ-որ ճանապարհ անցած մարդը»:*

«Ժողովուրդը» հասկանալի է համարում անկայունության ու հանրային լարվածության մթնոլորտում մարդկանց «պոռթկումները». *«Յուրաքանչյուր լրագրողի զգացմունքերը չեն կարող չարտահայտվել իր հեղինակած նյութում: Սակայն մենք կոնկրետ փաստերով ենք խոսում, դատարկ պոռթկում չէ»*: Եթե հաշվի առնենք, որ, Քնար Մանուկյանի բնորոշմամբ, իրենց խմբագրականների 99 տոկոսը քաղաքական թեմաներով են, պարզ է, որ անձնական վերաբերմունքի արտահայտումն անխուսափելի է. *«Ասենք, Նիկոլ Փաշինյանը արել է հայտարարություն: Մեր վերաբերմունքը հետեւյալ դրսեւորումն ունի. հանում ենք իր նախկին տարիների ասածները, դնում ենք այսօրվա ասածի կողքին ու հրապարակում հատուկ էջում, որը կոչվում է «Նիկոլ Փաշինյանի սուտը»*:

«Առավոտի» խմբագիրը կողմնակից է երկրում տիրող իրավիճակին, աշխարհաքաղաքական իրադարձություններին հավասարակշռված կերպով է արձագանքելուն.*«Ես արդեն չեմ անում այն, ինչ անում էի 90-ականների վերջում, 2000-ականներին, երբ իմ նյութերում մի քիչ ցինիկ կատակներ կային: Իհարկե, քննադատում եմ, բայց, ընդհանուր առմամբ, ոճս ավելի զուսպ է դարձել»:* Առավոտի» միակ սյունակագիրն, ի դեպ, հենց գլխավոր խմբագիրն է: Պատճառն Արամ Աբրահամյանը բացատրում է մեկ հարցական նախադասությամբ.*«Ո՞ւմ վստահեմ»:*

Ընդհանուր առմամբ, լրատվամիջոցներում ԿԱՐԾԻՔ ներկայացնելու խնդիրն այսպես է ձեւակերպում Արա Թադեւոսյանը. *«Կարծիք ներկայացնելը շատ կարեւոր է, եւ ես կարծում եմ, որ մենք այդ մեծ խնդիրը Հայաստանում ունենք: Անգամ եթե սյունակից վերանանք եւ ուղղակի հոդվածների մասին խոսենք: Ունենք մեծ լրատվամիջոցներ, բայց չես կարող ասել, որ, օրինակ, դրա դեմքը սա է: Անուն չկա: Լրատվամիջոցներ կան, ընդ որում, արդեն 25+ տարիների պատմություն ունեցող, որ դիմագիծ չունեն: Լրագրությունն այն մասնագիտությունն է, որը պիտի անձնավորված լինի: Լրատվամիջոցներ կան, որոնք շատ հաջողակ են, մեծ լսարան ունեն, բայց, եթե ուզենաս դրանց հրապարակումների հոսքի մեջ ինչ-որ անուն առանձնացնել, ասես՝ ես երեկ այսինչի հոդվածը կարդացի, չկա նման բան: Կարծում եմ, դա մեր լրատվական դաշտի ֆունդամենտալ խնդիրներից մեկն է, որի պատճառով լրագրությունը բարի համբավ չունի: Ի՞նչ պահաջես անդեմ, հավաքական հեղինակից…»*:

<u>ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

Ամփոփելով եւ վերլուծելով խմբագրական/մեկնաբանող հոդվածներ (Open editorials/commentary articles) ժանրի՝ որպես վերլուծական, կրթական նշանակություն ունեցող նյութերի կիրառմանը նվիրված հետազոտության շրջանակներում իրականացված մշտադիտարկման եւ լրատվամիջոցների գլխավոր խմբագիրների հետ խորացված հարցազրույցների արդյունքները,

Երեւանի մամուլի ակումբը ներկայացնում է հետեւյալ եզրահանգումներն ու առաջարկությունները.

- Լրատվամիջոցները պետք է նկատի ունենան, որ չնայած հանրային կարծիքի ձեւավորման գործում սոցիալական ցանցերի եւ վիդեո տեղեկատվության մեծացմանը, լսարանը շարունակում է հետաքրքրվել ավանդական տեքստի վրա հիմնված լրագրողական նյութերով: Դրանց գրավչությունն ավելի ու ավելի է պայմանավորվում հեղինակների անձնական գործոնի առկայությամբ՝ խնդիրների նկատմամբ նրանց ինչպես անհատական, այնպես էլ պայմանականորեն կոլեկտիվ (խմբագրական հոդվածների դեպքում) ոչ ստանդարտ տեսակետների արտահայտմամբ: Այս առումով, լրատվամիջոցի ճանաչելիությունն ու պահանջվածությունը մեծապես պայմանավորված է կարծիք ներկայացնող ստորագրված եւ անստորագիր սյունակներ հրապարակելու պրակտիկայով:

- Հաշվի առնելով լսարանի թեմատիկ նախասիրությունների բազմազանությունը, ժամանակակից կյանքի եւ հետահայաց վերլուծությունների լայն շրջանակը, որոնք առաջարկվում են խմբագրական հոդվածների եւ հեղինակային սյունակների միջոցով, կարող ենք արձանագրել, որ դրանք նպաստում են այս կամ այն լրատվամիջոցին ընթերցողների կապվածության ձեւավորմանը:

- Այս առումով խնդրահարույց կարելի է համարել հայկական ԶԼՄ-ների պրակտիկան, որոնք իրենց ուշադրությունը կենտրոնացնում են առավելապես ներքաղաքական

խնդիրների վրա: Մանավանդ, երբ այդ կենտրոնացումն ուղեկցվում է նեղ քաղաքական շահերի հետապնդմամբ: Այս պրակտիկան սահմանափակում է ընթերցողների շրջանակը՝ պոտենցիալ լսարանը բաժանելով որոշակի քաղաքական համակրանքներ եւ կողմնակալ նախապատվություններ ունեցող «ճամբարների»:

- Վերը նշված հանգամանքները հատկապես առանձնահատուկ նշանակություն են ստանում տարածաշրջանային եւ գլոբալ մասշտաբի իրադարձությունների, գործընթացների եւ միտումների մասին հասարակությանն իրազեկելու պարագայում: Առանց համապատասխան գիտելիքների եւ պատկերացումների, հայկական լսարանի համար չափազանց դժվար է կողմնորոշվելը ազգային առաջնահերթությունների հարցում, որոնք առնչվում են հակամարտությունների ու անվտանգության սպառնալիքների հաղթահարմանը եւ տարբեր ոլորտներում երկրի զարգացման հնարավորությունների ստեղծմանը: Օբյեկտիվ գործոնների պատճառով, որոնք տեղական լրատվամիջոցներին թույլ չեն տալիս իրենց սեփական թղթակցային ցանցի միջոցով ձեռք բերել եւ տարածել օպերատիվ միջազգային տեղեկատվություն, ծայրահեղ կարեւորություն է ստանում վերլուծական բովանդակությանը, որը խմբագրականների եւ կարծիքների այունակների միջոցով ամփոփում է տարածաշրջանային եւ համաշխարհային գործընթացները՝ ներկայացնելով դրանց համապարփակ պատկերը:

- Հայաստանյան ժամանակակից հասարակության քաղաքական, տեղեկատվական եւ կոգնիտիվ բեւեռացվածության հաղթահարման անհրաժեշտությամբ է թելադրված որակյալ լրատվամիջոցների սեգմենտի ընդլայնման եւ ամրապնդման, դրանց նկատմամբ վստահության բարձրացման խնդիրը: Այս առումով, սույն հետազոտության արդյունքների վրա հիմնված առաջարկություններից մեկն է՝ ավելի հաճախ եւ հետեւողականորեն դիմել խմբագրական հոդվածների եւ կարծիքների այունակների հրապարակմանը, որոնք պետք է լսարանի հետ ազնիվ եւ վստահելի հաղորդակցության կարեւոր ուղի դառնան:

- Հաշվի առնելով այս եւ մի շարք այլ ուսումնասիրությունների միջոցով բացահայտված որոշակի բացը, որն առկա է Հայաստանի բնակչության հիմնական հետաքրքրությունների եւ մտահոգությունների (ըստ սոցիոլոգիական հարցումների) եւ լրատվամիջոցների թեմատիկ ընդգրկման, այդ թվում խմբագրականներում եւ հեղինակային այունակներում արտահայտված կարծիքների միջեւ, կարիք կա, որ վերջիններիս հեղինակներն ընդլայնեն լուսաբանվող ոլորտների շրջանակը: Մասնավորապես, չնչին բացառություններով, ուշադրության պակաս կա սոցիալական խնդիրների, այդ թվում հայ-ադրբեջանական հակամարտության եւ դրանից առավել տուժած հասարակության հատվածների նկատմամբ:

- Լսարանին առանցքային թեմաների շուրջ տեսակետների լայն շրջանակ ներկայացնելու համար, ներառյալ անվտանգության խնդիրները, խաղաղության եւ կայունության հաստատումը Հարավային Կովկասի տարածաշրջանում, լրատվամիջոցներին խորհուրդ է տրվում հրավիրել «արտաքին հեղինակների»՝

վարելու իրենց սյունակները, որոնք կարող են ավելի բազմազան դարձնել հասարակությանն առաջարկվող օպտիմալ լուծումների փնտրտուքը: Դրա համար ռեսուրսներ եւ հնարավորություններ գտնելը պետք է լինի Հայաստանի ողջ պրոֆեսիոնալ մեդիա էկոհամակարգի խնդիրը:

- Ելնելով վերը նշվածից՝ Հայաստանում գործող դոնոր կազմակերպություններին, որոնց առաջնահերթությունների շրջանակում է ԶԼՄ-ների զարգացմանը եւ որակյալ լրագրությանը ցուցաբերվող աջակցությունը, առաջարկում ենք դիտարկել խրախուսման մեխանիզմներ՝ հատկապես խմբագրական եւ կարծիքի սյունակների ժանրերի համար: Պոտենցիալ բարձր որակավորում ունեցող հեղինակների ներգրավմանն ուղղված նախաձեռնողական մոտեցումները կարող են նպաստել հետազոտության տվյալներով արձանագրված ժանրային ճգնաժամի հաղթահարմանը:

Հրապարակվել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի եւ n-ost-ի կողմից իրականացվող «Մրցակցող պատմումներ» նախագծի շրջանակներում: